

րիա (Հալէպ), զԱնտիոք, զԿեսարիա Պաղեստինոյ, զՍերաստիա, զՍամարիա, զԻէոսպօլիս, զՅոսպէտայ լիովքն հանդերձ. է որ առին պատերազմաւ, եւ է որ անձնատուր եղեն պայմանաւ մինչ 'ի Թուականն Հիճրէթի \80 (636): Յետ այսր ամենայնի եհաս զօրավարն Ապու Օպիտայ բազմութեամբ զօրաց 'ի Կողմանս Յորդանանու, եւ գրեաց զիր առ Երուսաղէմացիս եւ տսէ. « Ողջոյն այնոցիկ որք հետեւին ուղիղ ճանապարհին եւ հաւատան Աստուծոյ եւ մարգարէի նորին, հրաւիրեմ զձեզ ընդունիլ զդաւանութիւնն, զոր քարոզեաց Մէհէմմէտ. եթէ ընկալ ջիք՝ կարճեմք զձեռս մեր հեղուլ զարիւնս ձեր եւ յափշտակել զորդիս եւ զինչս ձեր. համարեա՞լք մեզ յեղարարս եւ մտանկե՞ք ընդ լծով ծառայութեան մերոյ: Իսկ եթէ հակառակ կացեալ բանից իմոց յօժարութեամբ ձերով սիրեցէք զմահ, ուտել զխոզենի եւ ըմպել զգինի, ոչ դարձուցից զսուր իմ մինչեւ իսպառ ջնջեցից զձեզ յերկրէդ յայդմանէ »:

Իսկ Երուսաղէմացիք գիտակ իսկ էին արչաւանաց Իսմայէլեան զօրուն, եւ թէ որպէս անկեալ էր ահ եւ երկիւղ նոցա 'ի վերայ բնակչաց երկրին, եւ հասեալ կային ոտք նոցին առ դրունս Երուսաղէմի. վասն որոյ աճապարեալ բարձին զվայտ խաչին Քրիստոսի եւ զամենայն սպասս եկեղեցեաց եւ առաքեցին ընդ ծով 'ի Կոստանդինուպօլիս:

Եւ իբրեւ ոչ ընկալաւ զօրավարն պատասխանի բանից իւրոց, եկեալ սլաշարեաց զԵրուսաղէմ, եւ սկսաւ նեղել զքաղաքն: Եւ յաւուր միում ելեալ Քրիստոնէից 'ի քաղաքէն անկան 'ի վերայ բանակին Իսմայէլեան, բայց Կոստորեալ 'ի նոցանէ բազմաց՝ մնացեալքն փախուցեալ ամրացան 'ի քաղաքն. յայսմ մարտի զօրավար եկաց խալիս իպնէ-Լ'Էլլիստ Տեսեալ Ապու-Օպիտայ թէ սակաւ են զօրք Քրիստոնէից 'ի քաղաքին, ոչ երարձ զպաշարումն: Նեղեալ քաղաքացեաց խնդրեցին հաշտութիւն այսու պայմանաւ. « Գալ ինքնին Օմարայ յԵրուսաղէմ՝ կուլ զաշինս, տալ ազատութիւն ինքեանց, եւ ապա սունուլ զքաղաքն »: Եւ անձն առ զօրավարն, բայց խնդրեաց զերդումն, զի 'ի գալն Օմարայ մի դրժեսցին բանից իւրեանց, եւ ստահակեալ ոչ սունուցուն յանձն մտանել ընդ լծով ծառայութեան Արա-